



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1078



208.21  
U - 96

1890

ՀԱՅՐ ՀԱՅԿԱՆՔ

ԱՅՍԻՄՈՎ

Հ Պ Օ Բ Ա

Վ Ե Վ Ա Վ Ա Վ Ա Վ Ա

208.21  
U-96

2001

2010

**ՀՐԱՄԱՆԱՐ**  
**ՍԻՆՈԳԻ**  
**ՄՐԲՈՅ ԷՀՄԻԱՄԾՆԻ**

200

(21)

200 ԱՅ  
386 - ԱՊ  
208.21 Ե: ՔԱՐՈԶ  
Ա-96 7/11/1922  
ՍԱՄԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ ԱՐԴՅՈՒՆ  
36679ա.հ.

ՏԱՐԱԽՈՅ ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ  
 ՀԱՅԹԵՐՅՈՒԱՆ ՄՐԲՈՅ ԱԻԵՏԱՐԱՆԻ ՈՐ ԸՆՏ  
 Դ.ՈՒԿԱՍՈՒԻ Գ.Լ. Ե. 1-35

20008-59

200

100  
100  
100  
100

- Եւ իբրև կատարեաց զամենայն բանս իւր ի լոելիս ժողովրդեանն եմուտ ի կափառնառում:
- Հարիւրապետի ուրումն ծառայ՝ չարաշար հիւանդացեալ մերձ էր ի վախճանել, որ էր նմա պատուական:
- Իբրև լուտ զթիսուէ, առաքեաց զծերսն ի զրէից, աղաջել զնա. զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա:
- Եւ նորքա եկեալ առ Յիսուս, աղաջէին զնա սուէայ և ասէին. թէ արժանի՞ է, որում ըգշնորհս զայս առնես:
- Զի սիրէ զազգս մեր, և զժողովրդանոցն նա շինեաց մեզ:
- Եւ Յիսուս գնաց ընդ նոսս: Իբրև ոչինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամն, և ասէ, Տէ՛ր, մի ինչ աշխատ լինիր. զի չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մուանիցես:
- Վասնորոյ և ոչ զաման համարեցայ

արժանի առ քեզ գտլոյ. այլ ասա բանիւ, և  
բժշկեսցի մանուկս իմ. • 8. Քանզի և ես այր մի  
եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ  
ինե զինուորս. և ասեմ սմա. Երթ, և երթայ.  
և այլում՝ թէ Ե'կ և գայ. և ծառայի իմում՝  
թէ Արա զայս, և առնէ: 9. Եւ իբրև լուսու  
զայս Յիսուս, զարմայաւ. գարձաւ առ ժողո-  
վուրզն՝ որ երթային զչետ նորա, և ասէ. Ա-  
մէն ասեմ ձեզ. թէ և ոչ յիսրայէլի այսչափ  
հաւասա գտի: 10. Եւ գարձան անդրէն պատ-  
գամաւորքն ի տուն, և գտին զծաւայն հիւանդ  
բժշկեալ:

«11. Եւ եղե ի վաղիւն երթայր ի քաղաք  
մի, որում անուն էր Նային. Երթային ընդ նմա  
և աշակերտքն նորա, և ժողովուրդ բացում: 12. Իբրև մերձ եղե ի գուռն քաղաքին, և ահա  
ելանէր մեռեալ մի, որդի միամօր մօր իւրոյ, և  
նա էր այրի. և ժողովուրդ քաղաքին էր ընդ  
նմա: 13. Իբրև ետես զնա Տէր, գթայաւ ի համ.  
և ասէ Մի լար: 14. Եւ մասուցեալ մերձեցաւ  
ի գագաղմն. և որ բարձեալն ասնէին՝ զտեղի  
առին, և ասէ. Պատանի գու, քեզ ասեմ. արի:

15. Կանգնեցաւ, նոտաւ մեռեալն, և սկսաւ  
խօսել. և ետ զնա ցմայր իւր: 16. Եւ ահ կա-  
լաւ զամենեսին, և վառաւոր առնէին զլսառու-  
ած, և ասէին. թէ Մարգարէ ոմն մեծ յա-  
րուցեալ է ի միջի մերում. և թէ Այց արար  
Աստուած՝ Ժողովրդեան իւրում ի բարութիւն:  
17. Եւ ել զրայց այս ընդ ամենայն հրէաստան  
վասն նորա, և ընդ ամենայն կողմանս աշ-  
խարհին:

«18. Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն  
իւր վասն ամենայնի այսորիկ: 19. Եւ կոչեաց  
առ ինքն երկու ոմանս յաշակերտաց իւրոյ  
Յովհաննէս, աւաքեաց առ աէր, և ասէ. Դու  
ես, որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք: 20. Եւ եկեալ առ նա արքն, ասեն. Յովհաննէս  
մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ, և ասէ.  
Դու ես. որ գալոցն ես, եթէ այլում ակն  
կալցուք: 21. Եւ ինմին ժամն բժշկեաց զբա-  
զումնի հիւանդութեանց, և ի հարուածոց, և ի  
յայսոց չարաց և կուրաց բազմաց շնորհեաց աե-  
սանել: 22. Պատասխանի ետ նոցա, և ասէ. Եր-  
թայր, պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէրդ և

և լուսայք. զի կոյրք տեսանեն, և կազք գնանց  
բորսոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն,  
աղքատք աւետարանին: 23. Եւ երանի իցէ, որ  
ոչ գայթակղիցի յիս: 24. Եւիբրեւ գնային հրեշ-  
տակքն Յափշաննու, սկսաւ խօսել լնդ ժողո-  
վուրգսն վասն Յափշաննու: Զինչ ելէք յանապա-  
տըն տեսանել. եղէ գն շարժուն ի հողմոյ: 25.  
Այլ զինչ ելէք տեսանել, այլը ի հանդերձս  
վասիկութեան զարգարեալ. ահաւանիկ որ ի  
հանդերձս երևելիս և ի վասիկութեան են՝ յար-  
քունիս են: 26. Այլ զինչ ելէք տեսանել.  
մարգարէ. Այս՝ ասեմ ձեզ. առաւել ես քան  
զմարգարէ: 27. Զի սա է, վասն որոյ գրեալն է,  
թէ Ահա առաքեմ զհրեշտակ իմ՝ առաջի քո,  
որ յարգարեսցէ զճանապարհ քո առաջի քո:  
28. Ամէն ասեմ ձեզ. մեծ ի ծնունդս կանանց  
մարգարէ՝ քան զՅոփշաննէս ոչ ոք է. բայց  
վարքիկն յարգայութեան Աստուծոյ մեծ է քան  
զնոս: 29. Եւ ամենայն ժողովուրգն իբրեւ լու-  
ան և մաքսաւրգն, արդարացուցին զԱստու-  
ած. զի մկրտացան ի մկրտութիւնն Յափշան-  
նու: 30. Խակ վարիսեցիքն և օրինականիքն լզ-

խորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս  
իւրեանց. զի ոչ մկրտեցան ի նմանէ: 31. Արդ,  
ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս այսարիկ  
և ո՞ւմ իյեն նմանողք: 32. Նման են մանկաւոյ,  
որ ի հասարաւկս նստիցին, կարգայցեն զի-  
մեանս, և ասիցեն. ֆողս հարաք ձեզ և ոչ  
կափաւեցէք, ազբայաք, և ոչ լացէք: 33. Եկն  
Յափշաննէս մկրտիչ, ոչ ուտէք և ոչ ըմպէք. և  
ասէիք. Դե գոյ ի նմոս: 34. Եկն որդի մարգոյ,  
ուոէ և ըմպէ, և ասէք. Ահա այլ կերող և  
արբեցող, բարեկամ՝ մաքսաւրայ և մեղաւո-  
րաց 35. Եւ արդարացաւ իմաստութիւն  
յորդւոց իւրոց:

Սուրբ Աւետարանի այս ընթերցուածն՝ նախորդ  
տետրումն զետեղուած ընթերցուածի շարայրու-  
թիւնն է: Նախորդ ընթերցուածն էր լեռան վերայ  
խօսած բարոյականն, զոր վերջացոյց Փրկիչն՝ նմա-  
նեցնելով, թէ իւր այն խօսքերն լսողներն եթէ կա-  
տարեն, կնմանին այն իմաստունին, որ երբ տուն շի-  
նէ, հիմքը քարի վերայ կդնէ. որն որ հեղեղներուն  
հարուածէն շշարժիր, և յաւիտեան կանգուն կմնայ:  
Խոկ որոնք որ կլսեն այն խօսքերն, և չեն կատա-  
րեր, նոքա կնմանին այն յիմարին, որ երբ տուն

շինէ, հիմքն հողի վերայ կդնէ. և զոր հեղեղներն կկործանեն, կտանեն, որոյ ոչ մի մնացարդը չմնար: Քրիստոնեայքս՝ որ Փրկչին Քրիստոսի վարդապետութենէն ուսած, և նորա արքայութեան հասնել կփափագենք, աւելի փոյթ պիտի ունենանք այն բարոյական օրինաց՝ որոյ արդարութիւնն կառաւելու մովսիսական օրինաց արդարութենէն: Մովսիսի օրինաց արդարութիւնը կդատէր և կապաժէր անօրէնն և չարագործն, նորա գործած չարիքն իրեն գարձունելով, այսինքն՝ աչք հանողին աչքը կհանէր. և ակռայ կոտրողին՝ ակռան կկոտրէր. որով կուսուցանէր, որ այլ ևս չար չգործին իրենց ընկերին: Եսկ Փրկիչը՝ կուսուցանէր. շուրջն հակառակ՝ շուրջնել, այլ շուրջնել: Միայն ուսուցանելով՝ թէ չարագործներէն վրէժ պիտի ինդրէ ինքն Աստուած, եթէ նորա չգագարին իրենց չարիքէն: Այս շնորհաց բարոյականն համառօտեց Փրկիչն մի խօսքում, «ինչ որ կկամենայք, որ ուրիշներն անեն ձեզ, նոյնպէս արէք և գուք ուրիշներուն»: Փրկիչն՝ այսպէս կհամառօտէր այն բազմաթիւ օրէնքներն, որպէս զի լսողներն՝ դիւրաւ ըմբռնեն և չմոռանան: Այս համառօտութիւնն՝ անջինջ կդրօշմուի ամեն մի բարեպաշտի սրտումն, և բարեպաշտներն՝ իրենց ամբողջ կեանքումն դիւրութեամբ կուղեն իրենց ճահապարհներն՝ այս փոքրիկ իմաստութիւնն իրենց

կանոն ունենալով: Եթէ մեր սրտում գրօշմած ունենանք այս համառօտ խօսքն, ամբողջ օրինագիրք մի շարադրուած կունենանք մեր մաքում, և այլ ևս չենք կարօտիր հատոր հատոր գրքերու, և հարիւրաւոր ու հազարաւոր յօգուածներու: Զնջենք մեր սրտի տախտակէն այս միակ կանոնը, որ Փրկչին պատուիրած կեանքի բովանդակ գործառնութիւնն ու շարժումներն կուղղէ. և մարդու կեանքն՝ այս աշխարհիս հոգսերէն բաժանած, յափտենական կենաց խաղաղութեան և լուսոյն հաղորդ կանէ, իաղաղութեան՝ որուն կցանկան ամեն մարդիկ, ու չեն համերի, ըստ որում աշխարհակրութեան ունայն փառքերն կփակեննորա ճանապարհն և կդժուարացնեն: Աշխարհի փառքերն սիրահարուած մարդկան աչքերն կվարագուրուին, և այլ ևս չեն տեսներ Փրկչին հաղորդած այս լոյսն, որ ծածուկներն ևս յայտնի կտեսնէ, մտքի և սրտի խորքերն կբննէ:

Մտքերնուս մէջ անջինջ գրօշմնեք Ճմարիտ կենաց այս համառօտ կանոնն, և մեր կեանքն ըստ այսում շարունակելով, հետևենք Փրկչին և լսենք: թէ ինչպէս կարգարացնէ մեղաւորներն, և կդարձնէ գէպ ի յափտենական կենաց ճանապարհն: Արդ լսենք սուրբ Աւետարանի այս ընթերցուածի թարգմանութիւնն, և մտագիր լինինք նորա մէջ ծածկուած իմաստներուն, և ըստ այնմ յարենք Աստուծոյ

բանին—կենաց բանին և լուսոյն—Քրիստոսի, նորա  
պահանջած կատարեալ հաւատովն՝ որ լսելէն միայն  
կծագի, և կատարեալ մտագրութեամբ կհաստատուի:

« Ա. Ա. Եւ Երբ Եւ ոյս ամեն իւսուց լմնցուց ժողովրդեան  
ահանցում, Արքանուածուած ճառաւ: 2. Այ հարիք-ըսպետի  
ժառաւ, որ պիտանի էր նորան, Հայաշոր հիւանդացան էր  
և վախճանելու վերոյ էր:

Փրկիչն՝ որ մանկութեան ժամանակ նազարեթում  
կրնակէր, քարոզութեան ժամանակ՝ ընակութիւնն  
փոխել էր ի Կափառնաում, ինչպէս կերեկ աւե-  
տարանչաց ցուցմունքներէն. այժմ ևս լեռան վե-  
րայ խօսած քարոզը լմնցուցած կդառնայ ի Կափառ-  
նաում: Հռոմայեցի մի հարիւրապետ՝ կաթողին  
կսպասէր Փրկչի վերագարձին. ըստ որում նորա պի-  
տանի ծառայն՝ չարաչար հիւանդացել էր, և մեռ-  
նելու վերայ էր: Այս հարիւրապետն հեթանոս էր,  
և պաշտօնեայ հռովմայեցւոց տէրութեան. պաշտօ-  
նական անձանց պիտանի եղող ծառայն՝ մեծ նշանա-  
կութիւն ունի, այնչափ՝ որ իւր տէրոջն հաւասար  
արժանիք ունի. ըստ որում տէրոջը չհասած տեղե-  
րը նա կդնայ և դործ կլցնէ: Հարիւրապետն իւր  
պատուական ծառային բժշկութեանն համար կսպա-  
սէր Փրկչին, և կաթողին կսպասէր, որ տղայն չմե-  
ռած, հասնի: Հեթանոս հարիւրապետն՝ թերևս լը-  
սած Փրկչին կատարած սքանչելի բժշկութիւններն»:

կհաւատար, թէ կարող է Փրկիչն բժշկել նորա ծա-  
ռայն:

« 5. Եւ Երբ Յէսոսունի մասն, հրեաներէն ժերեբն իւըր-  
իւց, որ աղառչէն զնա, որոկն զի (լուսու) գոյ, ողբեցնէ նո-  
րա ծառայն:

Հարիւրապետը լսեց, թէ Յիսուս եկել է. նոյն  
քաղաքի հրեից ծերերն՝ (որ հարիւրապետին հետ  
յարարերութիւն ունէին աղջային ծերակոյտի գոր-  
ծերու մասին,) կիրկէ Յիսուսին, որ ինդրեն, բե-  
րեն, որպէս զի մահէն աղատէ իւր ծառային: Այս  
հանդամաննն ևս կյայտնէ, թէ հարիւրապետը՝ մեծ  
ոմն էր, որ ինքն գնալու փոխանակ, հրեից ծերերն  
յանձնաւու կինին գնալու. հրեայք՝ հեթանոսաց  
տուները մտնելն՝ պղծութիւն կհամարէին. թերևս  
այս ծերերը պիտի համոզէին զՅիսուս, որ զիջանի,  
գայ բժշկէ հարիւրապետի ծառայն:

« 4. Ս. Նուու եկել էն Յէսոսունի մատ. սուետ հաղացէն  
զնա, և իսակին, ին որդունի է (այն հարդին) որուն այս  
նորդն իսկէն. 5. զի մէր սուետ իսէր. և ժողովրդացը  
նա շինց մէր (համար):

Հրեից ծերերը կողին հեթանոս հարիւրապետի  
գործն, որ ապացոյց մի է, թէ հարիւրապետն հրեից  
օրէնքին ծանօթ էր, և միոյն Աստուծոյ հաւատոցն  
հաղորդ: Փրկչին ժամանակն կային և հեթանոս  
փիլիսոփաներ, որ բազմաստուածութեան գաղափա-

ըր կհերքէին կային և փիլիսոփաններս որ նոյն իսկ  
իրենց աղքաց մէջ պաշտուած կուռքերն կհերքէին  
թէ նոքա Աստուած չեն. կային և ուսումնարաններ,  
որ կուսուցանէին, թէ միայն մի է արարիչն Աստու-  
ած, որ կինամէ տիեզերքն, և մարդկան գործերն  
պիտի գատի. այսպէս կուսուցանէին այն փիլիսոփա-  
ներն՝ որ հոգւոյ անմահութիւն կդաւանէին: Այս  
հարիւրապետն ևս այն կարգէն մի հեթանոս կերպի,  
որ թերեւս Հրէից օրէնքին տեղեկանալով հաւատաց  
նոցա պաշտած Եհովային—Տեառն զօրութեանց, և  
նորա այս հաւատոց արդիւնքն է, որ Հրէից ժողո-  
վրդանոց է շինել: Փրկիչն հարիւրապետին այս հա-  
ւատքն տեսնելով նորա գործած գործումն՝ հաւա-  
նեցաւ և ընդունեց նորա ինդիրը կատարել:

« 6. Իւ Յիսուս ճնաց նոցա ճեռ: Երբ այլ Լու շար հե-  
տէ չէր ուստին, հորիւրապետն՝ (ուրեւ) բարեկառներ իւըր-  
ից տր նա, և ասաց նմա. Ո՞վ յոդիր, Տէ՛ր, ո՞ւ ես ար-  
ժանի չէր, Ան դու ի՞մ յարէին դախն այնեւ: 7. Ուրան հա-  
մար և ո՞ւ դիս արժանի համարեցայ ուղ հօդ դաշտու: Պյու  
խօսով ասա: և հանուկս բժիշու: »

Հարիւրապետի այս երկրորդ պատգամաւորներու  
բերած խոստովանութենէն բոլորովին յայտնի կլինի,  
թէ Հրէից օրէնքին ծանօթ էր, և օրինաց պահան-  
ջած սրբութիւններն ինքն չունենալով: իւր անձն  
անարժան կհամարէր Փրկչին մօտենալու, նոյնպէս

և տունն անսուրբ կհամարի: և անբաւական, թէ  
այն տեղ մտնէ Փրկիչն՝ Աստուծոյ որդին՝ մարդա-  
րէից գուշակած Քրիստոսն՝ որուն և հեթանոսք պի-  
տի ակնկալէին: Հարիւրապետն՝ բոլորով սրտիւ կր-  
հաւատացյ, թէ Յիսուսի միայն խօսքն՝ բաւական է  
հիւանդութիւնը վերցնել և կաղաչէ, որ խօսքով  
միայն ասէ, հրամայէ ծառային բժշկութիւնն:  
« 8. Գանդէ և ևս իշխանութեան ներւոյ նշանակուած մի  
հարդ էմ, և իմ (իշխանութեան) ներւոյ զնուութեան ունի  
սորան կասեմ չնա, և կը բայց. և ուրէինն՝ Ան էկ, և ին-  
քոյ, և իմ նաւային՝ Ան պայման արա և իանէ:

Հարիւրապետն՝ իշխանութեան հնազանդեալներու  
այս օրինակը փաստ բերելով, կապացուցանէ իւր  
հաւատքն, թէ Աստուծոյ խօսքին կհնազանդին ա-  
մեն արարածներն որոց կարգումն՝ և իւր ծառային  
հիւանդութիւնն պիտի վերնայ: եթէ Յիսուս միայն  
խօսքով հրամայէ.

« 9. Իւ Երբ պյու ևս Յիսուս, սարմացաւ: դանիա-  
դանովը բրդին՝ որ նորա եպեւն իւրիային, և առայ. իւրա-  
կասեմ յեղ Ան և ո՞ւ նարայէւ մէջ չփոռա, այսլադ հաւատք:

Փրկիչն՝ ինքն ամենատես է, նոյնպէս և Հարիւրա-  
պետին հաւատքն տեսաւ, առաջին և երկրորդ պատ-  
գամաւորներու վկայելուն անգամ Հարկ չկար. բայց  
այս պատգամաւորներն Հարկաւոր էին, որ Հրեայիք  
և Ճանշային, թէ Աստուծոյ հաւատքն որչափ

զօրացած է հեթանոսներում։ մինչդեռ հրեայք՝ որ օրինաց և մարդարէից դուշակութիւններն ու պատգամներն ունեին՝ նոցա վերայ կերպնուին, և Աստուծոյ հաճոյից ծանօթ էին, ու դարձեալ այնպէս եռանդագին ակնկալութիւն չըռնեին։ Հրէից անհաւանութիւնն ըստ ինքեան կյանդիմանուի այս հարիւրապետի հաւատոց մեծութեանն առջև, վասնորոյ և փրկիչն բացայատ կերպով կգովլէ այս մեծ հաւատքն, հրէից անհաւանութիւնն յանդիմանելով։

Եւ որպէս զի այս յանդիմանութիւնն՝ աւելի ևս աղդեցիկ լինի, կասէ փրկիչն, — Գնացէք, թող նորա հաւատքն համեմատ լինի։

« 10. Եւ պատրիառութեն՝ այնուելն առան դարձոն, և հիւնադ ժողովն՝ բժշկութ դրան։ »

Այն ինչ հրամացեց Փրկիչն, նոյն վարկենին բժշկուեցաւ հիւանդն, և պատգամաւորներն՝ երբ դարձան, բժշկուած գտան։

Առանց Աստուծոյ ոչինչ չլինիր տիեզերքում։ և ո՞չ մի ճնճղուկ կընկնի։ Աստուած՝ զմարդն՝ ազատակամ ստեղծեց, և մարդ՝ իւր ազատութեամբն չար կործէ։ և չարի գործն՝ հիւանդութիւն է, և արատ՝ կատարեալ մարդուն։ Այսպէս հարիւրապետի ծառայն՝ ինչպէս և ամեն հիւանդներն՝ չար գործելով իրենց վերայ հիւանդութիւն և մահ կհրաւիրեն, առանց գիտնալու, թէ իրենց գործն՝

հիւանդութիւն և մահ կբերէ և երբ հիւանդութիւնն կհասնի ու մահն կմօտենայ, կիմանան, թէ չարի հետեանքն էր. և կիորհին, որ մահէն զերծանին. այս մահն հիւանդն միայն Աստուած, Աստուծոյ խօսքն, նաև հիւանդն հաւատքն-թէ կարող է Աստուած հալածել մահ։ Երբ այս կատարեալ հաւատքն կծագի հիւանդին կամ նորա տէրոջ սրտումն, Աստուած կտեսնէ զայն, և կսաստէ հիւանդութեան, որ հեռանայ հաւատացեալէն։ Փրկչի գործած ըսքանչելի բժշկութեանց այս մի օրինակն կարդալով և լսելով ուղղենք մեր սիրտն առ Աստուած, և կատարեալ հաւատովլինդրենք, որ մերժէ մեզմէն մեր չար գործերէն յառաջացած հիւանդութիւններն, և ապրեցնէ զմեզ տարաժամ մահուանէ։ Հաւատանք, թէ Աստուած է, որ կփրկէ ամեն տեսակ չարէ. միայն թէ կատարեալ հաւատովլինդրենք Աստուծոյ փրկութիւնը, և զոր պիտի գտնենք մեր ձեռաց գործերումն՝ Աստուծոյ արդարացուցած գործերն միայն գործելով այս աշխարհումն անցնելիք հոգեւոր կենաց սակաւժամանակեայ օրերում։ Դառնանք առ Աստուած՝ սրտի մտօք, և հետեւենք ունկնդիր լինել նորա սուրբ Աւետարանին, որ անմահութիւն և յափատենական կեանք կուտայ հաւատացելցն։ Հետեւենք լսել սուրբ աւետարանին, և տեսնենք, թէ ինչպէս կկեցուցանէ մեռելներն։

410 Եւ մի՛ս օրն մի ժաղաց կը բլինք, որո՞ն անոնն էր նոյնին. Նորո հետեւն իւրիոյին և նորո ուշիքուներն. և շատ ժողովրդուր: 120 Երբ ապագին ուռառն հօդեցու, և այս իւլլեւ մի մեռեալ՝ որ մէկ հորդի ուրդին էր էր մօքն. և նու էր այրէ: և առաջի ժողովրդուն բառ մունին նորո հետ էր: 130 Տէրն՝ երբ ուեսու զնու, ինչոց նորո վերայ և ապաց: Մի՛ լոր:

Փրկիչն՝ իրեն հետ կպտոցնէ աշակերտներն. նոյն-պէս հետը կդնան և շատ ժողովուրդներ, որոնք կը-ցանկանան Աստուծոյ զարմանալի գործերն տեսնել. և խօսքերն շնորհաց խօսքերն լսել. Փրկիչն՝ հետ-դիշետէ մին քան զմիւսն աւելի զարմանալի կգործէ. այս գործերուն մին ևս բաւական է ապացուցանե-լու, թէ Աստուծոյ գործ է այն, և գործողն՝ որդի Աստուծոյ և Աստուած. բայց՝ ըստ որում տկար է մարդկան խորհուրդն, և գժուարաւ հասու կինի աստուածային խորհուրդներուն, մի մի և կարգաւ կցուցնէ Փրկիչն իւր սքանչելագործութիւններն, որ-պէս զի իրեն հետ ընկերացած բազմութիւնն, որոնք Աստուծոյ թելագործեամբ կհետեւն տեսնել տեսնեն Աստուծոյ փառքն:

Ա. Յսպէս նային քաղաքի գոնէն ելլող մեռելի մօր վերայ կիսլայ Փրկիչն, և կասէ. Մի՛ լար: Մայրը կուլայ, թէ որդին մեռած է. Փրկիչը կասէ. Մի՛ լար. որ ասել է, թէ կենդանի է, քո որդին կենդանի պի-տի տեսնես:

« 140 Եւ յուրաքանչ ժամանակի օգուեցած. և որոնտ որ վըցուցէն էն իսպանէն, իւղան. և ապաց: Ուղ ուստանէ, ուղ իսպան, և լ 150 Ավետեալ իսպանեցած, և նորու, և ոկուց իսպան և դուռը զնու էր մօքն:

Փրկիչն սքանչելագործութիւններն հռչակուած էին և նային քաղաքում. այն հռչակներն այնպէս ազգել էին այն այրի կնոջ վերայ, որ Յիսուսի Մի՛ լար՝ խօսքին հաւատաց, թէ որդին պիտի կենդա-նանայ. դադալը վերցնողներն ևս կհաւատային, և կեցան ուր որ էին: Աստուծոյ ձայնը ներգործեց մեռեալ պատանիի ականջին, և կանգնեցաւ, նստաւ, սկսեց խօսել, զինքն կանչողին կինդուէր, և Փրկիչն խկոյն նորա ձեռքէն կրունէ, մօրը կյանձնէ: Յու-ղարկաւոր բազմութիւնն, որ գիտէին հաստատապէս, թէ մեռած է, թերես կնեղանային՝ որ ձանապար-հումն այնպէս կեցան դադալակիրներն, և չեն շա-րունակեր: Եւ հետաքրքիր կհարցափորձեն մէկզմէկ, թէ ինչու կեցան: Մի՛ փոքր ժամանակ, և եղելու-թիւնը տեսնողներն սկսեցին պատասխանել, և ասել թէ Յիսուս կանչեց զմեռեալն, և նա ելաւ:

« 160 Եւ վահը բանեց ամենէն. և զիստուած իտ- ուստառէն, և իսպան, թէ մէծ առքիուրէ ուսուր և էնէլ մէր մէջ, և լիւ Առուտած այցելունէն աբան էր ժամա- ներէն, որ է բարունին դանի:

Մեռելի յուղարկաւորներն երբ իմացան, թէ մէ-

ռելն յարեաւ, սկսեցին փառք տալ Աստուծոյ, որ  
մարգարէից բերանով գուշակուած մեռելոց յարու-  
թիւնն՝ արգեամիք ցոյց տուաւ այսօր, և տեսան,  
խելամուտ եղան, թէ մահուանէ ետքն անմահ կեանք  
կայ, և Աստոււած այցելութեան ելեր է իւր ժողո-  
վըրդին, որ մահէն ապրեցնէ, Նախածնողաց յան-  
ցանքէն մկան մահն վերցնէ մարգիկներէն, Աստու-  
ծոյ յայտնութեան այսպիսի խոստումներն յիշող-  
ներն քիչ են ժողովրդեան մէջ, իսկ մեծ մասն կը-  
զարմանան Փրկչին վերայ, և այնչափ միայն խել-  
քերնին կհասնի, թէ մի մեծ մարգարէ յարութիւն  
առել է և իրենց մէջ է, լսել էին մարգարէից գըր-  
քերէն, թէ մեռել կյարուցաննէին, և այն մարգարէ-  
ներէն մին կհամարէին զՓրկիչն: Օրինաց և մարգա-  
րէից պատգամներուն լիով տեղեակ չէր ժողովուր-  
դըն, և ակնկալութիւն չունէին Աստուծոյ որդուցն  
գալստեան, նորա մասին եղած պատգամներն չեն յի-  
շեր, այլ յարուցանող մարգարէները միայն կմտարե-  
րեն, և կզարմանան:

“ 17. Ե- այս զբայցն՝ նորա համն բոլոր Հրեաստան  
տարբանաւեցաւ, և այն աշխարհին բոլոր իոդերն:

Նայինի մեռելի յարութեան լուրն տարածեցին  
ժողովուրդն բոլոր Հրէաստանումն և աշխարհին ա-  
մեն կողմէրն, թէ Յիսուս յարսց: Բայ որում այս  
մեռեալ պատանին մեծ տան զաւակ էր, ինչպէս կե-

րեի աւետարանչի ակնարկութենէն՝ թէ քաղաքի  
մեծ բազմութիւնը նորա հետ էր. այս պատճառաւ  
մանաւանդ շատ հոչակուեցաւ այս համբաւն: Մինչեւ  
իսկ Յովհաննէս մկրտչի աշակերտներն զարմացան,  
և այս ամենն պատմեցին Յովհաննէսին. ըստ այսմ:  
« 18. Ե- այս ամենուն համն Յովհաննէսին պատմեցին  
նորա աշխարհունէն: 19. Ե- Յովհաննէս՝ իւր աշխարհուն-  
էն երիսուն իանէնց իրէն օտա, իրէնց Տերոջ օտան, և ասոց  
գո՞ւն էս, որ ժաման էս, ինչ ուրիշն սպասէն+ (աչ պա-  
հեն+): 20. Ե- նորա հօտ էկան մարդիկն, ու ասոցին,  
Յովհաննէս մկրտչին՝ +եղի իրէնց զմուն և ասոց, գո՞ւն էս,  
որ ժաման էս, ինչ ուրիշն սպասէն+:

Յովհաննէս Մկրտիչ բանգարկուած էր, երբ լսեց  
թէ Յիսուս նային քաղաքի գունումն այրի կնոջ մէկ  
հատիկ որդին յարուցել է: Յովհաննէս Մկրտիչ  
կաթոգին կսպասէր, որ Յիսուս՝ Աստուծոյ արքայու-  
թիւնն կսկսէր, և աշխարհին անօրէնութեանն վերջ  
տար: Յովհաննէս Մկրտիչ Հօր Աստուծոյ յայտնու-  
թեամին գիտէր, թէ Յիսուս՝ Քրիստոսն է. Աս-  
տուծոյ անարատ դառն է, մեղերը վերցնող և անօ-  
րէնութիւնները ջնջող ընդունելի տարեկանն է: Յով-  
հաննու աշակերտները չէին գիտել Ամրայ անձան  
Քրիստութիւնը լսել էին: Յովհաննէս Մկրտիչ ինչունի  
շակերտներն կլորէ, որ երթան անձամբ տեսնելու  
Քրիստոսի գործերն, և իրեն համբաւ բերեն: Յով-



Հաննէս Մկրտիչ կսպասէր, որ շուտով լինի մեղաց  
թողութիւնն, և ամեն մեռելներն յարութիւն առ-  
նեն, և յաւիտենական կեանքն յայտնուի: Յիսուս՝  
դործնականապէս կպատասխանէ Յովհաննու այս  
հարցման: ըստ այսմ:

« 21. Եւ նոյն ժամանակ շաբերն բժշկեց հիւնդունիւն-  
ներէ, և հարուածներէ, և նոր դերէ, և շաբ հոգերու-  
ուեռունիւն շնորհեց: 22. Պատասխան դուռառ նոյս, և ա-  
սաց, զնոտիւն, և պարմէյէ+ Յովհաննէն ինչ որ ան աւ-  
սայի+, և լուցիւն, ոչ հոգերը հուռունն, և հոգերը հուռուն.  
Բորբոռներն իսրբունն, իսրելին իւնն, մեւեններն յարունիւն  
հաւանաւ. աղքատներն իսաւեւալանաւնն:

Յովհաննու աշակերտներն թերեւս չէին հաւատար  
իրենց լսածներուն, ինչ որ կլսէին Յիսուսի դործած  
սրանչելեաց մասին. վասնորոյ և նոցա առջև կրժշկէ  
Յիսուս տեսակ տեսակ հիւսնդներ, որով և լսածնին  
հաւատարիմ կանէ գործովի: Եւ այսպէս գարձունե-  
լով Յովհաննու աշակերտներն, կպատուիրէ պատ-  
մել տեսածնին և լսածնին, ըստ որում այս աշակերտ-  
ներն տեսան, և հաւատացին, յորդորակ մի ևս կը-  
յաւելու Յիսուս, որ ամուր պահէն իրենց հաւատ-  
քըն և չգայթակղին, և այսպէս կասէ.

« 23. Երանէ պէտէ լինէ (այս մարդու)՝ որ ի՞մ մլրաց  
չէ այնահուն:

Հաւատացողներ շատ էին, բայց հաւատացելոց ըն-

տիրներն միայն հաստատուն են մինչեւ վերջն. իսկ  
աշխարհասէրներն կդայթակղին: Փրկիչն՝ իւր այս  
վերջին խօսքն կուղղէ Յովհաննու աշակերտներուն  
և ոչ Յովհաննէսին: ըստ որում Յովհաննէս՝ իրրե  
մարդարէ Աստուծոյ՝ տեսաւ Փրկչին օրն ու արքա-  
յութիւնն. և թէ Փրկչին արքայութիւնն՝ ուսուցա-  
նելով պիտի տարածուէր: և ոչ ինչպէս հրեից զը-  
պիրներն կկարծէին՝ սուսերօք և պատերազմական  
յաղթանակօք պիտի կատարուէր: Բայց Յովհաննու  
աշակերտներն՝ որ լսած էին Յովհաննու վկայութիւնն՝  
թէ սա է որ երկնքէն կուգայ, և տեսածը կիսուի:  
Յովհաննու աշակերտներն՝ որ այս վկայութիւնը լը-  
սել էին Յիսուսի մասին, և այժմ տեղեկացել էին  
թէ փարիսեցիներն սպանել կիսորհեն զՅիսուս, նո-  
քա էին, որ դայթակղելու վերայ էին. որոց դայ-  
թակղութիւնն կվերցնէ Յիսուս այս վերջին խօսքով:  
Յովհաննու աշակերտներն՝ եթէ գիտնային, թէ  
«Աստուծոյ մի օրն՝ իրրե հազար տարի է, և հազար  
տարին իրրե մի օր» այն դայթակղութեանը չէին  
միտեր, ինչպէս որ Յովհաննէս գիտէր, և առանց  
դայթակղութեան ցցց կուտար Աստուծոյ գառնն,  
և ընդունելի տարեկանն, որ մեղքերը կրառնայ:

« 24. Երբ քնարին Յովհաննու իրիածներն (աշխարհ-  
ներն), ակաց իսաւ ժողովը որուն հետ որ Յովհաննու համար.  
Ոնապարուսած ի՞նչ պէտելու ելոյց, հոգի շարժուող ելով ՞ի՞ն:

Յովհաննէս Մկրտիչ երբ անապատումն կքարողէր, ամեն կարգի մարդիկ գնացին յանապատ, որ լսեն նորա քարոզութիւնն. Այս հետաքրքիր մարդիկն՝ ըստ որում գիտէին, թէ մարդարէից գուշակած Քլրիստոսի գալստեան և յայտնելուն ժամանակն է, կարծեցին, թէ Յովհաննէս ինքն լինելու է գալիք Քրիստոս, և զՔրիստոս տեսնելու կերթային. և նոցա ակնկալութիւնն՝ այն էր, թէ Քրիստոս պիտի դայ իրրե թագաւոր թագաւորական գայիսոնն ի ձեռին, և պիտի զինուորեցնէ ժողովուրդներն, որ պատերազմաւ յաղթեն Հռովմանյեցւոց տէրութեան գայիսոնին՝ որ նոյն ժամանակներն կտիրէր և Հրէաստանին. Այս թագաւորական գայիսոնը կախնարկէ Փրկիչն՝ հողմն շարժուող եղէն ասելով. Ըստ որում աշխարհի մարդկան ամենազօրեղ սպառազլնութիւնն Աստուծոյ զօրութեան առաջ՝ կհամեմատի հողմէն շարժող եղեգին, ինչպէս Սովոչէսի ժամանակ պանչելապէս ցցյց տուել էր Աստուած եգիպտական փառաւոնի գայիսոնին վերայ:

Փրկչին այս հարցմունքն թերեւս չհասկացան ժողովուրդներն, վասն որս և կկրկնէ աւելի ևս պարզանելով իւր միտքն.

« 25. Հասկա է՞նչ ուենաւու եւոյտ. դադուի հանդելինեւու շարժարուում մա՞րդ: Ո.հա՞ երեւէ և դադուի հանդելինեւու եղողնէրն՝ արժուակիներուում էն:

Այս հարցու մով կախնարկէ միկնոյն միտքն, թէ Քրիստոս տեսնելու որ գնացիք, կնորհէիք, որ երկելի հանդերձներում զարդարուած մի թագաւորը տեսնէք: Այնպիսիներն՝ որ երկելի հանդերձներն ու զարդարանքներն մի մեծ բան կհամարին, նորա անապատներումն գործ չունեն, նոքա պալատներում՝ կընակեն, և շատ են աշխարհում: Այս կրկին հարցումներումն զգալի կամէ Փրկիչն, թէ մարդուն փրկութիւնը կամ կատարելութիւնն այն հանդերձներու Ճոխութեան հետ յարաբերութիւն չունի, և ոչ եղեգնեայ գաւազաններուն հետ: Կյեշեցնէ Փրկիչն, թէ ինչպէս էր մարդ՝ կենաց փայտի օրերումն, այսինքն Ագամայ անմեղութեան օրերումն՝ գրախատին մէջ. և փնդուել կուտայ, թէ ինչ կորսնցուց մարդն՝ երբ պատուիրանազանց եղաւ, եւ այսպէս վնդուողներն իսկոյն խելամուտ կլինին, թէ մարդ՝ մեղանչելէն ետքն կարօտեցաւ թղենւոյ տերեւներէ յօրինած ծածկոյթի. որով և հասկանալի կլինի, թէ անապատէն գալիքն՝ այն վիճակի մէջ պիտի գար, որ մեղքերն ու մեղաց հետևանքն վերցնէր. և ոչ թէ մեղաց հետևանքն եղած հանդերձներով զարդարուած լինէր:

Այսպէս կյանդիմանուի Հրէից ակնկալութեան թիւր հանդամանքներն, որոնք կախնալէին Քրիստոսի գալստեան. և նորա առջևէն գալիք Եղիայ

թեղբացիի գալստեան. բայց միւնյն ժամանակն՝  
աշխարհի թագաւորներէն—տիրապետներէն մէկուն  
նման զինու զօրութեամբ գալ կսպասէին. Զէին ի-  
մանար Աստուծոյ զօրութիւնն որոյ միայն ակնար-  
կութիւնն բաւական է. որ աշխարհիս բոլոր սպա-  
ռազինութիւնն միանդամայն խորտակէ. նոքա չէին  
մտաբերէր, թէ Աստուծոյ բազուկն ինչպէս բարձ-  
ացաւ եգիպտական զօրութեան վերայ:

Հրէից ակնկալութեան թիւը հանգամանքներն  
այսպէս յանդիմանելէ ետքն, կհարցնէ և ուզիղ ա-  
կընկալութեան մասին:

« 26. Հապո՝ Է՞նէ դեռներու ելոյդ. Նորդարէ՞—Ա.Ի.՝  
և ես իսուեմ յեղ. ինչ առջապէին ա-ելին:

Խսրայէլի ժողովուրդն՝ ուրիշ անդամ՝ քաղաքնե-  
րում և շնորհում կտեսնէր իւր մարդարէներն ու  
տեսանողներն. որոցմէ ոմանք միամիտ ժողովրդեան  
գործերը կդատէին, և օրինաց ճանապարհներումն  
կառաջնորդէին. և ոմանք՝ թագաւորաց և մեծամե-  
ծաց ամբարշտութիւնն ու յանցանքներն կյանդի-  
մանէին, և շարունակ հալածման մէջ էին. Ըստ այ-  
սըմ՝ մարդարէ տեսնելու ակնկալութեամբ գնացող-  
ներն իրենց կարծածէն տարրեր տեսան. այսինքն  
կիսամերկ անտուն, ոչ Մովսիսի կերպն ունէր, ոչ  
Սամուելի, և ոչ Եսայեայ, որոց առաջին երկուքն  
իրեւ թագաւոր կճոխանային. և երրորդն՝ միշտ ար-

քունիքումն՝ խորհրդակից էր թաղաւորաց. Ա.Ժ.  
սա՝ «աղոթք բուրդ հաբած էր, և մէջունն չաշէ գործի,  
և նորա կերախուրն էր մարտի և գայրի մէջ» (Մարէ. Ա.՝  
6). Ուղարի բրդէ զգեստն՝ Եղիայի կերպը կյիշեց-  
նէր. Եւ չհասկացան, թէ ո՞վ է սա. Եղիայի է, թէ  
Քրիստոն է, Փրկիչն՝ այնպէս կվճռէ, թէ Յովհան-  
նէս՝ մարդարէէ առաւել ոմն է և որոյ ապացոյցն  
այսպէս կյաւելու ասել.

« 27. Ո ան զի սա է, որոյ համար գըուած է. Ա.Հա-  
ժա առջլէն ինքիւմ էմ հըլւորան, որ ու հանապարհն սունչէ  
առջլէն:

Մարդարէներն՝ իրեւ պատգամարեր Աստուծոյ  
խօսեցան շատ դիպուածներ՝ որոնք իրենց օրերումն  
կատարութեան. բայց ինչ որ խօսեցան մարդկային  
փրկութեան մասին՝ զոր Քրիստոս Փրկիչն պիտի կա-  
տարէր, միայն զգացուցին, թէ պիտի լինի փրկու-  
թիւն. իսկ Յովհաննէս այն փրկութեան կատա-  
րումն տեսու. մատնացոյց եղաւ գէպ է քառա Ա.Հ.-  
առուծոյ, որ Նուբէրը իբառնաբ. և նորա իսուարելի+ իւր-  
իւրէն ճանապարհն ինչնին ակուց յարդարելը սունչէլ, ժո-  
ղովրդէն ալրդն առ Ա.Հ.առուած դարձնաւելով. Վասն որոյ  
և մարդարէէ աւելի է. և լրումն ու կատարումն է  
մարդարէից:

« 28. Երա իսուարէ յեղ կանանց Ճնանդիւնն ո՞չ ո՞ւ  
Յավաննէն» մէջ մարդարէ չէ, . . . . .

Յովշաննու մարդարէութեան մեծութիւնն մէջ  
կրերեն աւետարանիչներն լսու պյսմ։ (Դուկ. Ա.  
5—25 39—80)։

« 4. Հրէաստանի Հերովդէս թագաւորի օրերումն՝  
Արիայի դասակարգէն մի քահանայ (Կար) Զաքարիա  
անուն. և նորա կինն՝ Ահարովնի աղջիկներէն, և  
նորա անունն՝ Եղիսաբեթ։ 6. Եւ երկուքն ալ ար-  
դար էին Աստուծոյ առջեն, աէրոջ պատուիրաննե-  
րումն անարատ կարուէին։ 7. Եւ նոքա որդի չու-  
նէին. վասն զի Եղիսաբեթ ամուլ էր, և երկուքն  
ալ օրերին անցուցած (ծերացած) էին։ 8. Եւ նո-  
րա՝ Աստուծոյ առջեն քահանայութիւն անելու ժա-  
մանակն՝ ինչպէս որ օրերու կարգն հասել էր։ 9. Քա-  
հանայութեան օրէնքին համեմատ՝ խնկարկութիւն  
անել հասաւ նորան՝ Տէրոջը տաճարը մտած։ 10. Եւ  
ժողովրդեան բոլոր բազմութիւնն՝ դուրսը աղօթքի  
կինար խունկի ժամանակն։ 11. Եւ տէրոջ Հրեշ-  
տակն երեեցաւ նմա. սյնպէս որ խունկի սեղանոյն  
աջ կողմէն կանգնել էր։ 12. Եւ Զաքարիան խոռ-  
վեցաւ. և ահ ընկաւ նորա վերայ։

« 13. Տէրոջ Հրեշտակն ասաց նորան. մի վախե-  
նար, Զաքարիա, զի քո աղօթքն լսուեցաւ. և կինդ  
Եղիսաբեթ որդի պիտի ծնի քեզ, և նորա անունն  
Յովշաննէս պիտի կոչես։ 14. Եւ ուրախութիւն ու  
ցնծութիւն պիտի լինի քեզ. և շատերը պիտի իրն-

դան նորա ծննդեան ժամանակ։ 15. Ասսն զի մեծ  
պիտի լինի Տէրոջ առջեն. և զինի ու օղի պիտի  
չխմէ. և հոգւովսրբով պիտի լցուի հէնց իւր մօրն  
որովայնէն։ 16. Եւ իսրայէլի որդիներէն շատերն  
իրենց Տէր Աստուծուն պիտի գարձունէ։ 17. Եւ  
ինքն՝ նորա առջեն պիտի գայ՝ Եղիայի հոգւովն  
ու զօրութիւնովն, որ հայրերուն սիրտը որդիներուն  
վերայ գարձունէ, և անհաւաներն՝ արդարոց իմաս-  
տութիւնքն, որպէս զի Տէրոջ համար կազմ ժողո-  
վուրդ պատրաստէ։

« 18. Եւ Զաքարիայ ասաց Հրեշտակին. — ինչո՞վ  
դիտնամ այդ բանը, վասն զի ես ծեր եմ, և կինս  
անցել է իւր օրերէն։

« 19. Հրեշտակն պատասխան տուաւ. նմա, և ա-  
սաց, Ես Գաբրիէլն եմ։ որ Աստուծոյ առաջը կիե-  
նամի և խրկուեցայ որ քեզ հետ խօսիմ։ և այդ  
բանն աւետարաննեմ քեզ։ 20. Եւ ահա համր պիտի  
լինիս, և չկարողանաս խօսել մինչեւ այն օրն՝ երբ  
այդ բանն լինի. փոխանակ որ չհաւատացիր իմ խօս-  
քերուն, որոնք իրենց ժամանակումն պիտի կատա-  
րուին։

« 21. Եւ ժողովուրդն աչք դրած կապասէր Զա-  
քարիային, և նորա տաճարումն ուշանալուն վերայ  
կզարմանային։ 22. Եւ երբ ելաւ, նոցա հետ խօ-  
սել չէր կարողանար. և իմացան, թէ տաճարումն

տեսիլք տեսաւ, և նա նշանացի կիսոսէր նոյցա հետ, և պապանձել կեցել էր: 23. Եւ երբ նորա պաշտօնին օրերն լմնցան, իւր տունն գնաց: 24. Եւ այն օրերէն ետքն՝ նորա կինն Եղիսաբեթ յղացաւ, և կծածէէր ինքնզինքն հինգ ամիսներ, ու կասէր: 25. Ի՞նչ դործ գործեց ինձ տէրն այս օրերում՝ երբ նայեցաւ ինձ, որ մարդիկներէն Էղջ իմ նախատինքն վերցնէ:

39. «Այն օրերն ելաւ Մարիամ: և շուտով դէպ ի լեռնակողմն Յութայի քաղաքն գնաց: 40. Եւ Զաքարիայի տունն մտաւ, և Եղիսաբեթին բարեեց: 41. Եւ երբ Մարիամի ողջոյնն լսեց Եղիսաբեթ, մանուկն խաղաց նորա փորումն. և Եղիսաբեթ լըցուեցաւ սուրբ հոգւով: 42. և բարձր ձայնով աղաղակեց ու ասաց. Կանանց մէջն օրհնուած ես դու, և օրհնուած է քո որովայնի պտուղն: 43. Եւ ուստի է ինձ այս բանն, որ Տէրոջս մայրն ինձ մօտ գայ: 44. Վասն զի աշա երբ ողջոյնիդ ձայնն ականջիս հասաւ, այս մանուկն փորումն խաղաց ցնծարով: 45. Եւ երանի հաւատացողին՝ թէ այս ասածներուս կատարումն պիտի լինի նմա Տէրոջմէն: 46. Եւ Մարիամ կասէր, իմ անձն թօղ մեծացնէ ըզՏէր . . . .

57. «Եւ Եղիսաբեթի ծնելու ժամանակներն լընցան, և որդին ծնեցաւ: 58. Եւ լսեցին նորա

շուրջը գտնուողներն և նորա ազգատոհմն, թէ Աստուած իւր ողորմութիւնն մեծացցյ նորա վերայ, և խնդացին նորա հետ: 59. Եւ ութերորդ օրն եկան, որ մանուկն թլիփատեն, և հօրն անունովն Զաքարիայ կանուանէին զնա: 60. Պատասխանի տուաւ նորա մայրն և ասաց. 2է. այլ՝ Յովհաննէս պիտի կոչուի: Եւ կասեն նորան. քանզի քո ազգում՝ ոչ ոք չկայ, որյ անուն Յովհաննէս կոչուի: 62. Նորա հօրն կակնարկէին, թէ ի՞նչ կկամի անուանել զնա: 63. Եւ տախտակ ուղեց, գրեց ու ասաց. Յովհաննէս է գորա անունն:

«64. Եւ շուտով բացուեցաւ նորա բերանն ուղղուն, և կիսուէր ու կօրհնէր զԱստուած: 65. Եւ ահ ինկաւ ամենուն վերայ, որոնք որ զայս կլսէին, և որոնք որ նոցա շուրջը բնակած էին: Եւ Հրէաստանի բոլոր լեռնակողմումն կպատմուէին այս ամեն խօսքերն: 66. Եւ ամենքն որ կլսէին՝ իրենց սրտումն հաստատեցին, և ասացին. Ի՞նչ պիտի լինի այս մանուկն: Եւ տէրոջ ձեռքն նորա հետ էր: 67. Նորա հայրն Զաքարիայ ևս լցուեցաւ սուրբ հոգւով՝ մարգարէացաւ և ասաց:

«68. Օրհնեալ է իսրայէլի Տէր Աստուածն, որ մեզ այցելութեան ելաւ, և իւր ժողովրդին փրբեկութիւն արաւ: 69. Եւ փրկութեան եղջիւր հանեց մեզ իւր Դաւիթ ձառայի տնէն: 70. Ինչպէս որ

Խօսեցաւ այն սուրբերու բերանովն՝ որ սկիզբէն ի վեր նորա մարդարեներն էին։ 71. Փրկիչ մեր թշշ-նամիներէն և ամեն՝ զմեղ ատողներու ձեռքերէն։ 72. Աղորմութիւն անել մեր հայրերուն։ և իւր սուրբ ուխտն յիշել։ 73. Այն երգումն՝ զոր մեր Արքա-համ հօրն երգուեցաւ, թէ պիտի տայ մեղ։ 74. որ առանց երկիւղի, թշնամիներու ձեռքերէն փրկուած, պաշտենք զնա՝ 75. Սրբութիւն և արդարութիւն անելով նորա առջևն՝ մեր կենաց ամեն օրերումն։ 76. Եւ դուն, Մանուկ, բարձրեալի մարդարէ պիտի կոչուիս. վասն զի Տէրոջ երեսներու առջևն պիտի երթաս, որ նորա ձանապարհները պատրաստես։ 77. Նորա ժողովրդեան փրկութիւնն գիտցնես՝ որ պի-տի լինի նոցա մեղքերու թողութեանն համար, 78. Մեր Աստուծոյ գթութիւններուն ու ողորմութեանն մասին որոցմոլ պիտի այցելէ մեղ արեգակն՝ բարձ-րերէն։ 79. Որ պիտի երեսի մահուան ստուերներու-մն՝ ու խաւարում նստողներուն. որպէս զի մեր սոքերն ուղղենք գէպ ի խաղաղութեան ձանապար-հներն։ 80. Եւ մանուկն կաճէր ու կզօրանար հոգւով. և անապատներում կկենար մինչև այն օրն՝ որ երե-ցաւ իսրայէլին։ (Պուկ. Ա.)։

Աւետարանչի նկարագրուած այս յայտնութիւն-ներումն՝ Յովհաննու մեծութիւնն կտեսնենք այս կարգաւու։

Թէ կծնի Յովհաննէս ո՛չ հասարակ մարդկա-յին ծննդեան կերպով՝ այլ՝ նորա ծնողաց ծննդա-կանութեան տարիներն անցնելէն ետքն, որով յայտ-նի կլինի, թէ մարդկային աճելութիւնն ի սկզբանէ օրհնով Աստուծոյ՝ օրհնութեան անարատ ազգեցու-թեամբն կծնի Յովհաննէս, ինչպէս Իսահակ՝ Ար-քահամու որդի, և նորա որդին Յակոբ։ Յովհան-նէս՝ Աստուծոյ օրհնութեան անարատ ազգեցու-թեամբն ծնանելով՝ հաւասար է Իսահակին և Յա-կոբին մեծութեան. բայց առաւել է նոցամէն այն հանդամներով՝ որ Փրկչի երեսին առջևն պիտի զնայ, և տեսած Քրիստոնէն՝ Եղանց Առաջնորդն՝ պիտի գիտցնէ ժողովրդին, մինչդեռ Արքահամ։ Իսահակ և Յակոբ նախահայլներն՝ այս փրկութեան մասին՝ միայն լսեցին, և չտեսան. իսկ Յովհաննէս՝ տեսաւ, և տեսցուց «Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ ըզ-մեզս աշխարհի»։

Բ. Աստուծոյ հրեշտակի աւետիքն կտրուի միան-գամայն բոլոր ժողովրդեան խնդրուածոց միջոցին, և բոլորին յայտնի կլինի քահանայապետի Հայու-ստուն, պատահանձն, և ինչպէս որ յայտնութիւնն կասէ, «Հոգւով սրբով լցցի անդստին յորովայնէ մօր իւ-րօյ», այնպէս ևս կդուշակէ Փրկչին գալուստն, և մօրն բերանովն կօրհնէ զՏէրն և զՏիրամայրն։ Այս մեծութիւնն չունեցաւ ոչ մի մարդարէ և ոչ մի նախահայր։

Ք. «Անապատումն բառքառող ձայն» —պատրաստեցէք Տէրոջ ճանապարհն, և նորա շաւիղներն ուղղեցէք, ամեն ձորերն լեցուին, և ամեն լեռներն ու ըլուրներն խոնարհուին՝ գժուարիներն՝ դիւրինի փոխուին և առապարներն՝ հարթ ճանապարհներու, և ամեն մարմին տեսնէ՝ Աստուծոյ փրկութիւնն»։ (Պուկ. Գ. 4—6. Մատմ. Գ. 3. Մարկ. Ա. 3: Յովհ. Ա. 23: Եսայի Խ. 3—5): Աստուծոյ այս յայտնութիւնն գուշակեց Եսայի մարդարէ, և չէր հասկանար. իսկ Յովհաննէս՝ այս պաշտօնն կատարեց. Անապատում բնակեցաւ իւր մանկութենէն, և անձին օրինակաւն սորվեցուց, թէ Աստուծ է, որ կոնուցանէ զմարդ, և կպատուիրէր քաղաքացիներուն ու շինականներուն, որ իրենց կերակուրն ու հանդերձներն գործածին ինչպէս Աստուծոյ պարդեն, այսինքն երկու հանդերձ ունեցողն՝ մի հատր տայ չունեցողին. Նոյնպէս կերակուրն՝ երկու բաժին ունեցողն՝ մի բաժինն տայ չունեցողին։ Հարկահաններուն ևս սորվեցուց, որ իրենց հրամայուածէն գուրս չելլեն, աւելի չպահանջեն։ Պատերազմողներուն ևս կորվեցնէր, որ չկեղեքեն, չզրպարտեն, այլ՝ իրենց թոշակովն բաւականանան։ Այսպէս խոնարհեցուց Յովհաննէս՝ լեռներն ու ըլուրներն —մարդկան հպատներն ու ագահներն, ձորերը լեցուց —աղբատներուն և զրկուածներուն հա-

ւասար բաժին հանեց. գժուարիններն՝ դիւրինի փոխեց. և առապարներն՝ հարթ ճանապարհների — զինուորներու կեղեքումն ու զրպարտութիւնն վերցուց, և օրինական թոշակովն՝ ընդ հանուր ժողովրդեան կեանքին հաւասարեցուց, որով և ամեն գասակարգի մարդկան իմանալի և տեսանելի արաւ Աստուծոյ ողորմութիւնն ու փրկութիւնն. Աստուծոյ սահմանած այս պաշտօնն կատարեց Յովհաննէս անապատի կեանքէն դառնալով, և ակնառութիւն չուներ մեծի և փոքրի (1): Եւ այսպէս Քրիստոսի փրկութիւնն ընդունելու պատրաստեց ժողովուրդն։

Դ. Յովհաննու մեծութիւնն է իւր մարդարէութեան վերայ և այն, որ մեղքերը վերցնող գառնն տեսաւ, և իւր աշակերտներուն ցոյց տուաւ վկայեց Հրէից խրկած պատգամներուն. «Տեսաննէի զհոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից, և հանգչէր ի

(1) «Զայն բարբառոյ յանապատի, խօսքն՝ այսպէս կընդունին ոմանք, իբրեւ թէ Յովհաննէս քարերուն կլսօսէր, եւ անլուր մնաց. եւ այս մոռք՝ շատ անդամ իբրեւ առակ զուրցելու սովորած են այս կողմերու մեր ազգայիններն՝ եւ այս՝ ինչպէս կլսեմ իբրեւ թէ Յիւարէթի մելնակամներէն կառնուն։ Այլ այսպէս իմանալն՝ սիսաւ է, ըստ որում Յովհաննէսին լսեցին. մինչեւ իսկ Հերովդէս կլսէր խոնարհութեամբ. (Մարկ. Զ. 20), Զայն բարբառոյ յահանատի խօսքին բուն իմաստն է — Ուսանցակնառութեան խօսով։

վերայ նորա: Եւ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս. Յոյր վերայ տեսանիցես զհոգին, զի իջանիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ հոգւովն սրբով: Եւ ես տեսի, և վկայեցի, եթէ Սա է որդին Աստուտուծուծոյ: (Յովշ. Ա. 32—34): Այս վկայութիւնն հրէից պատգամաւորներուն վկայելով վկայեց և աշակերտներուն «Ահաւասիկ գառն Աստուծոյ. որ բառնայ զմեղս աշխարհի: Սա է՝ վասն որոյ եսն ասէի, Զինի իմ գայ այր որ առաջի իմ եղեւ. զի յառաջ իսկ եր քան զիս: Եւ ես ոչ գիտէի զնա. այլ զի յայտնի լինիցի իսրայէլի, վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել» (Անդ. 29—31): Այսպէս յայտնի տեսաւ Յովշաննէս՝ Աստուծոյ որդին, Աստուծոյ գառնն. այսինքն տեսաւ, թէ Աստուծոյ որդին՝ մարդկան մեղքն վերցնելու համար պատարադ պիտի լինի. այսպէս տեսաւ Յովշաննէս՝ Քըրիստոսի խաչուելն, մեռնելն, թաղուելն, յարութիւն առնելն, համբառնալն, և Հօր Աստուծոյ աջ կողմն նստելն: Այս է Յովշաննու մեծութիւնն, զոր կյշէ Փրկիչն ասելով. «Ամէն ասեմ ձեզ. մեծ ի ծնունդս կանանց մարդարէ քան զՅովշաննէս ոչ ոքէ»:

Արդ գառնանք մեր ընթերցուածին.

«28. Իբաս կտուեմ յեղ. իտուանց ժնուարներուուն, ու ու Յովշաննէսն մէջ մարդուէ չէ. բոյց Աստուծոյ արդայու-

լէան մէջ եղու կուբէին՝ ուն ուն մէծ է:

Թէ Յովշաննէս՝ կանանց ծնունդներումն եղող մարդարէներէն մեծ է, տեսանք արդէն աւետարան-չաց մէջ բերած յայտնութիւններէն. իսկ թէ Աստուծոյ արքայութեան մէջ եղող փոքրիկ հարդարէն ևս մեծ է քան զՅովշաննէս. ըստ որում Աստուծոյ արքայութեան մէջ կապրի, և ոչ աշխարհիս մարմնական կիրքերումն: Այս մեծութիւնն ունին այն ամեն հաւատացեալներն՝ որ Քրիստոսի հրովն ու հոգւովն սրբուած են, և նորա արիւնովն գնուած. որոնք յարութեան որդիեք են:

«29. Եւ ամէն ժողովուրդն. նաև մատուցուելու երբ շացն, արդարացնուցն զլաւուած. քան ոէ Յովշաննէս կրտսելուն:

Ծողովուրդն՝ որ լսեցին Փրկչին գովեստն Յովշաննու մասին. կանչեցին թէ Արդար է Աստուծո. այսինքն հասկացան, թէ Յովշաննէս ևս Աստուծմէ խրկուած էր, և Աստուծոյ պատուէրն կքալոցէր ու կկատարէր. վասն որոյ և իրենք լսեցին նմանոյնպէս և մաքսաւորներն կասէին, որոնք Աստուծոյ խոստացած փրկութեան ակնկալութիւն ունենալով, մկրտուել էին Յովշաննու մկրտութիւնովն:

«30. Իսկ փորէսեցներն ու օքնականներն՝ արհամարհներն Աստուծոյ խորհուրդն էրնց սրբաւուածն՝ վաս ոէ Ասմբառեցան նորամեն:

Իսկ փարիսեցիներն ու օրինականներն չհաւանեցան Յիսուսի գովեստին, զոր խօսեցաւ Յովհաննու մասին, վասն զի սոքա՝ Աստուծոյ փրկութեան կակընկալէին աշխարհի հայեցողութեան մոքով միայն, և Յովհաննու քարոզութիւնը չհասկացան ու չմկրտուեցան, նորա խօսքերն՝ Աստուծոյ պատուէրն չէին համարէր։ Սոքա նոյնպէս և Փրկչին խօսքերն ու գործերն կարհամարհէին, և միշտ մի արատ դնել կեսորհէին, ըստ որում կապասէին Աստուծոյ Փրկչին՝ աշխարհի հայեցողութեամբ միայն. այսինքն՝ այնպիսի մի Մեսիայ, որ թագաւոր լինի Հրէից, զինուորեցնէ ժողովուրդն, յաղթէ օտար ազգաց թագաւորներուն, և Հրէից ազգը բարձրացնէ, այսպիսի մարդկային խորհուրդներով կդատէին Աստուծոյ խոստացած փրկութեան պատգամներն. և թէ Յովհաննու և թէ Քրիստոսի վարդապետութիւնն ու խորհուրդն չէին հասկանար, վասն որոյ և իրենց մոքումն կանարդէին։

«51. Արտ՝ որ՝ Նանցեմ այս աշխի՝ հարդին, և արտ՝ ինձնին։ 52. Նուա են այն անոնցներուն՝ որ հրապարակներուն չնոտին, եկամբէի չի առաջն. և կուեն դուքը դիմոցն+ չեց և պատաւեցն+ այն առաջն+, և շարուցն+։

Փարիսեցիներն ու օրինականներն՝ Հրէից ժողովրդեան մէջ առաջաւոր մարդիկ էին. և ժողովրդեան մեծամասնութիւնն՝ նոցա օրինակին ու

հետքին կհետեւէր։ Սոքա Յովհաննէսի քարոզութիւնը չընդունեցին. և ոչ նորա վկայութիւնն ընդունեցին, թէ և ընդ հանուր ժողովրդեան մէջ ընդունուած էր, թէ Յովհաննէս մարգարէ է, և նորա քարոզած մըրտութիւնն՝ Աստուծմէ պատուիրուած է։ Փարիսեցիներն Յովհաննու վարդապետութիւնն չընդունեցին. նոյնպէս և Քրիստոսի վարդապետութիւնն չընդունեցին, Յովհաննու քարոզած և պատուիրած հեղութեան և հաւասարութեան առաքինութիւնն անկարելի կհամարէին. և զի Յովհաննէս ինքն անձամբ կկատարէր և ապա կուսուցանէր ու կպատուիրէր. Յովհաննու այս չնորհքն՝ զիւահարութեան կուտային, ու կասէին նորանում գեկայ, այն պատճառաւ կեր ու խում չընի։ Այս մի և նոյն փարիսեցիներն՝ Յիսուսի վարդապետութիւնն ևս չընդունեցին, այն Յիսուսին՝ որ թէ կուտէր և թէ կիսմէր, և նոյն ժամանակուայ մարդկան կհամեմատէր, և զՅիսուս կմեղադրէին ասելով, թէ Այս ուտող ու խմող մարդ, մաքսաւորներու և մեղաւորներու բարեկամ։ Այսպէս մի կատարեալ հակասութիւն էր փարիսեցոց հակառակութիւն։ Յովհաննու խօսքը մերժեցին, պատճառ դնելով թէ նա չուտէր և չխմէր. Յիսուսի խօսքն ևս մերժեցին, թէ նա ուտող խմող մարդ է։ Փարիսեցոց այս հակասութիւնն՝ փողոցներում

Խաղցող անխելք տղայոց կնմանցնէ, որ իրենց ընկերներն կմերժեն միայն այն պատճառաւ՝ որ իրենց կամքի փոփոխութեան չեն համակերպիր ամեն ժամանակ։ Որովհետ կյանդիմանէ փարիսեցւոց այն խորհուրդն, որ ոչ թէ Աստուծոյ խոհուրդն կփնդուեն, այլ իրենց կամքի կատարումն, միայն կինդուեն։ Աւան որոյ և կյաւելու Յիսուս թեթև կերպովակնարկել փարիսեցւոց այս պակասութիւնն։

53. «Յաշանեւ միտին եկա, ոչ խորհեր և ոչ ինուր։ և կասէի+ ու կա նոր մէջ։ 54. Մարդոց որդին եկա ինուր, ինուր, և կասէի+ Ոհա ուսուզ իմո՞ւ մատասուրէրու և մէջաւուներու բարեկամ մարդ։

Փարիսեցիք միայն առիթ կփնդուին, որ իրենց անհնազանդութիւնն արգարացնեն մարդկան առաջ, Յովհաննէս Մկրտչին չուտել չխմելն՝ առիթ արին և կասէին, գե կայ նորանում։ իսկ Փրկիչն որ կուտեր կիսմէր։ և այս առիթը չէին կարողանար գործածել նորա դէմ, ասացին, թէ մաքսաւորներու և մեղաւորներու բարեկամ է։ և նոցա հետ կուտէ կիսմէ։

55. «Եւ իմաստուննեան որդոքացու իւր որդիներէն։ Փարիսեցիներն ու օրինականներն՝ Աստուծոյ խորհուրդն ու իմաստութիւնն անարգեցին, և իրենց խորհուրդներուն կհետեւէին՝ թէ Յովհաննու քարոզութեան դէմ։ և թէ Քրիստոսի քարոզութեան

դէմ, իսկ Աստուծոյ խորհուրդն մինդողներն՝ որոնք Աստուծոյ իմաստութեան և չնորհաց ժառանգներն են՝ նոքա ընդունեցին թէ Յովհաննու վարդապետութիւնն, ու մկրտութիւնն և թէ Յիսուսի վարդապետութիւնը, որոնք և բարձրաձայն կանչեցին, թէ—Արդար է Աստուծոյ արդարութիւնն՝ իմաստութեան որդիներուն միայն յայտնի է։ և կընդունին խոնարհութեան նորա հրամայած ապաշխարութիւնն, ու առաքինութիւնն հեղութիւնն, խոնարհութիւնն, ողորմութիւն։

Արդ՝ և մեք լսելով այսօր աստուածային յայտնութեանց այս բովանդակութիւնն, Յովհաննու քարոզած ապաշխարութեան մկրտութիւնն, և Քրիստոսի Աստուծոյ ուսուցած քրիստոնէական ճշմարիտ աստուածդիտութեան առաքինութիւններն, դառնանք ի սրտ ապաշխարենք մեր անգիտութեան յանցանքներն, սրբենք մեր հոգին երկրային աղտեղութիւններէն և մարմնական կրքերու բորբոքումներէն, և աստուածմիրութեան հրովն փորձուած ու զտուած լուսաւորենք հոգւով և մտօք, տեսնենք Աստուծոյ մարդասէր ողորմութեան անսպառ չնորհքըն, որ միշտ կնպասէ մեղաւորաց դարձին։ և կընդունի անյիշաչար ու հայրական գթութեամբ։ Տեսնենք նորա ուսուցած առաքինութեան—խոնարհութեան, հեղութեան, խոհեմութեան և ողորմութեան՝

1078

— 30 —

Հետևող բերկրանքն, անսպառ հեշտութիւնն, որուն  
ցանկացող է միշտ մարդկային բանականութիւնն, և  
որ մարմնական ցանկութեանց բովէական հեշտու-  
թեանցն հետևող անսպառ չարեացն կհանդիպի ու  
կտառապի այս աշխարհի չար ոգւոյն որոգայթնե-  
րումն փակուելով. որմէ կազմատուին մարդիկ, մի  
միայն յօդնութիւն կանչելով Աստուծոյ ողորմու-  
թիւնն, և յուսալով նորա գթութեան. Տեսնենք  
հոգւոյ աչքով՝ Քրիստոսի Աստուծոյ կատարած ըլ-  
քութիւններն, թէ ինչպէս կրծշկէր հաւատով  
դիմող ախտաժէտներն, իմանանք, թէ նա ինքն է  
կենաց տէրն, և մահն կիսուսափէ նորա անունէն:

Տէր Աստուծ ինքն, ամենատեսն տեսնէ մեր խո-  
նարհ հոգւոյ դարձն. և իւր անսպառ ողորմութեամ-  
բըն լուսաւորէ մեր միտքն, իմանալ հոգւոյ ծնուն-  
դըն, և հոգիանալ. Հաղորդ լինել նորա փրկական  
խորհրդին՝ աներկբայ հաւատով և փրկութեան մէջ  
օրհնել զնա և փառաբանել. Տէր քուին է փրկու-  
թիւնն արքայութիւնն ու զօրութիւն և փառքն:

ԿԻՒՐԵՎ. Ա.ԱՐԴ. ՄՐԱՊԵԱՆՑ

8 Յ-Լ-1890 արք

Ե Յունիսի:

Ի Ցպարանի Ս Արքուղիկ Էջմիածնի:

0028099

1078

ՀՀ Ազգային գրադարան



NL0028099

